



ԵՐԿՈՒՇԱԲԹԻ, 17 ՅՈՒՆԻՍ, 2013

ՏԵՐՈՒՆԱԿԱՆ ԱՊՈԹՔ

(միասնաբար արտասանուած)

Իմաստութիւնն Հօր Յիսուս, Կուր ինձ իմաստութիւնն զբարիս խորհել եւ խօսել եւ գործել առաջի քո յամենայն ժամ. ի չար խորհրդոց, ի բանից եւ ի գործոց փրկեա զիս. եւ ողորմեա քո արարածոց եւ ինձ բազմամեղիս: Ամէն:

ՍԱՐՏՈՍ 144

ԱՂՕԹՔ ՅԱԶՈՂՈՒԹԵԱՆ ԵՒ ՅԱՂԹԱՆԱԿԻ ՀԱՄԱՐ

Օրհնեալ է Տէրը, իմ պաշտպան Վեմա,
որ ձեռքերս մեղամարտի կը վարժեցնէ,
եւ մատներս՝ նակատամարտի:
Իմ սէրս է ան, ամբուրիւնս,
բարձր աշտարակս է ան, իմ փրկիչս եւ վահանս,
որուն կ'ապաւինիմ.
Եւ ինքն է որ ժողովուրդները կը հնազանդեցնէ ինձի:

ՇԱՐԱԿԱՆ- ԱՊՈԹՔ

*Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա:
Ամենատէր Երրորդութիւն, սուր աշխաՀիս խաղաղութիւն:
Եւ Հիւանդաց բժշկութիւն, ննջեցէլոց արքայութիւն:
Արի Աստուած Հարցն մերոց, որ ապաւէն ես նեղէլոց:
Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա,
Յիսուս Փրկիչ մեզ ողորմեա:*

*Պահապան ամենայնի Քրիստոս,
աջ քո հոշանի լիցի ի վերայ իմ ի տուէ եւ ի գիշերի,
ի նստիլ ի տան, ի գնալ ի նանապարհ,
ի ննջել եւ ի յառնել, զի մի երբեք սասանեցայց.
Եւ ողորմեա՛ քո արարածոց եւ ինձ բազմամեղիս:*

ԱԲՐԱՄ ՂՈՎՏԸ ԿԸ ՓՐԿԷ (14:1-16)

Հեքաքրքրական գլուխ մըն է որ կը ներկայացուի, 14րդ գլուխը: Թագաւորներ, թագաւորութիւններ, պատերազմներ: Այս բոլորը ցոյց կու փան մարդկութեան վիճակը, ոչ խաղաղ ընթացքը, մէկը միւսին վրայ իշխելու փրամադրութիւնը: Այս դէպքերը կրնան փարօրինակ հնչել, բայց երբ այս դէպքերը յիշուած են Աստուածաշունչ Մատեանին մէջ, կը նշանակէ յափուկ նպատակ մը եւ ճշմարտութիւն մը ունին փոխանցելիք:

Նիւթական կամ պարմական ներկայացման կողքին նաեւ կայ հոգեւոր իմաստը այս դէպքերուն: Այսպէս կը նշուին 5 թագաւորութիւններ, որոնք նաեւ կը խորհրդանշեն մեր 5 զգայարանքները. տեսողութիւն, հոտորալիք, համարեւելիք, լսելիք, շօշափելիք: Իսկ 4 թագաւորները կը խորհրդանշեն աշխարհի չորս փարքերը, որոնցմով կազմուած է աշխարհը եւ մեր մարմինները:

Այս պատերազմին խորհրդանիշը կը դառնայ, թէ ինչպէս մեր 5 զգայարանքները կրնան գերի դառնալ աշխարհիկ ցանկութիւններուն: Այս դէպքը նաեւ օրինակ կը դառնայ եւ կ'օգնէ զօրացնելու մեր միտքն ու հոգին կարենալ դէմ դնելու համար գալիք վրանգները: Մանաւանդ երբ գիտենք, որ մեր զգայարանքները կրնան շար շուրջով տեղի փոխ մեր մարմնական ցանկութիւններուն եւ հաճոյքին:

Այս հաստատումը նաեւ կը ներկայացնէ մէկ այլ ուրիշ ճշմարտութիւն մը կապուած Ղովտի կեանքին եւ անոր ընդմէջէն մեզմէ իւրաքանչիւրին:

1. Փոխանակ արդար մարդուն հեք շարունակելու ճանապարհորդութիւնը, ուզեց հեռանալ:
2. Շեշտը դնելով արտաքին երեւոյթին, սակայն մոռնալով այնպէս թաքնուած վրանգը:
3. Անկախ ըլլալու հպարտութիւնը:

Հակառակ այս իրողութեան, սակայն, Աբրամ յանձն կ'առնէ երթալու եւ ազատելու իր եղբոր որդին պատերազմելով թշնամիներուն դէմ: Այս պատերազմը, սակայն, Աստուծոյ օգնութեամբ: Ինչպէս կարելի է պատկերացնել, որ Աստուած օգնէ որպէսզի պատերազմ մեղէ Աբրամ: Մէկ բան որոշ է ու պէք է ըլլայ, որ այս պատերազմները չարին դէմ մղուած են: Նոյն այս օրինակով նաեւ Պօղոս Առաքեալը կ'ըսէ. «Մեր ոպատերազմը երեւելի թշնամիին դէմ չէ, այլ աներեւոյթ»: Միւս կողմէ, նաեւ կայ այն ճշմարտութիւնը, որ եթէ երբեք Աստուծոյ առաջնորդութեամբ մղենք այս պատերազմը յաղթական դուրս կու գանք:

ՄԵԼՔԻՍԵՂԵԿ ԿՕՐՀՆԷ ԱԲՐԱՄԸ (14:17-24)

Այս երկրորդ բաժինը շար աւելի հեքաքրքրական է: Աբրամի դիմաւորութեան կու գայ Սաղեմի թագաւորը՝ Մելքիսեղեկը հաց ու զինով: Երկուքն ալ կը յուշեն երկրի պարարտութիւնը: Այս արարքը բարի գալուստ մտադրելու արարք է: Մելքիսեղեկ անունը կը նշանակէ՝ արդարութեան թագաւոր, իսկ Սաղեմի թագաւոր կը նշանակէ թագաւոր խաղաղութեան: Այս անունը համեմատենք Եբրայեցոյց նամակին 7:1-3 հեք: Աստուած կարծէք Մելքիսեղեկի միջոցով իբրեւ Բարձրեալ Աստուծոյ քահանայ կը յայտնուի, հեքազային իր Որդիին՝ Յշուս Բրիսպոսի մարդեղութեան մասին կարելու վկայութիւն մը փալու համար, որ մէկ կողմէ արդարութեան եւ խաղաղութեան թագաւորն է եւ միաժամանակ յախրենական քահանայ ըստ կարգի Մելքիսեղեկի (Սաղմ 110, 1, 4): Հաց ու զինի փալը, պիտի խորհրդանշեն գալիք Բրիսպոսի փրուելիք հացն ու զինին, որ իր իսկ Մարմինն ու Արիւնն են:

Իսկ գալով Աբրամի փուած ընծային, որ Աստուծոյ բաժին հանելը ենթակայութիւն եւ պաշտպանութիւն կը խորհրդանշէ: Ինչպէս նաեւ Աստուծոյ հանդէպ երախտագիտութիւն: Հին Կրակարանին մէջ Աստուծոյ ընծայուած նուէրները նիւթական էին, իսկ Նոր Կրակարանի պարագային Պօղոս Առաքեալ պիտի ըսէ, ձեր անձերը ընծայեցէք Աստուծոյ զոհասեղանին, որպէս Բանաւոր Պարարագ, հոգեւոր աղօթքներ: Տակաւին, այս հաստատումը կը սորվեցնէ թէ ինչպէս բարարար ըլլալ եղածով եւ ունեցածով, ու մանաւանդ շեշտը դնել վերին ինքերու, յախրենական կեանքին: Ի վերջոյ, նաեւ այս հաստատումը կը սորվեցնէ թէ ինչպէս աւարտին երբ մեր հոգեւոր պատերազմը կ'աւարտենք մեզ դիմաւորութեան կու գայ ճշմարտիք Մելքիսեղեկը՝ մեր Տէրն ու Փրկիչ Յշուս Բրիսպոսը: